ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱԱՀ գիտական խորհրդում

«30» 01 2023 թ. (արձ. , թիվ 6)

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ

ՀԱԱՀ ռեկտոր_____Վ. Է. ՌՈՌՈՒՏՅԱՆ

«03» 02 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱԽՈՒՍՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ ՀԱԱՀ) պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գիտական գործունեության՝ սույն կարգով սահմանված տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները:

1.2. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմին լրավճարները վճարվում են հրապարակված հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, գյուտերի համար ստացած արտոնագրերի, տեղական և միջազգային դրամաշնորհներ շահելու համար:

1.3. Լրավճարներ կարող են ստանալ միայն ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և գիտական անձանակազմի ներկայացուցիչները:

1.4. Սույն կարգով սահմանված լրավճարներ ստանալուն հավակնելու նպատակով ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու դեպքում, տվյալ աշխատողը կարող է ենթարկվել կարգապահական տույժի և զրկվվել սույն կարգի համաձայն լրավճար ստանալու իրավունքից՝ 3 տարի ժամկետով:

2. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2.1. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը, այդ թվում համատեղությամբ աշխատողը, կարող են ստանալ լրավճարներ աղյուսակում սահմանված գիտահետազոտական գործունեությունն իրականացնելու համար:

Աղյուսակ

N	Վարկանիշային միավորներ ապահովող հետազոտական աշխատանքի անվանումը	Լրավճարի չափը ՀՀ դրամով (ներառյալ հարկերը)
1	ՀՀ ԲՈԿ-ի, ՌԴ ԲՈՀ-ի սահմանված ցուցակներում, Հումանիտար գիտությունների եվրոպական հղման ցուցիչի (European Reference Index for the Humanities (ERIH PLUS))) կամ Ռուսաստանի գիտական հղման ցուցիչի (Российский Индекс Научного Цитирования (РИНЦ)) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրված հոդվածներ	40000
2	Սկոպուս (Scopus) և Վեբ օֆ Սայնս (Web of Science) միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերական-ներում տպագրված հոդվածներ ըստ քառորդների*	
	Q 1 (Scopus և Web of Science) մակարդակին պատկանող ամսագրերում	200000
	Q 2 (Scopus և Web of Science) մակարդակին պատկանող ամսագրերում	150000
	Q 3 (Scopus և Web of Science) մակարդակին պատկանող ամսագրերում	125000
	Q 4 (Scopus և Web of Science) մակարդակին պատկանող ամսագրերում	100000
3	Սկոպուս (Scopus) և Վեբ օֆ Սայնս (Web of Science) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրատարակ-չություններում տպագրված մենագրություններ	200000

4	Դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ (2 մասնագիտական գրախոսի և համապատասխան ստորաբաժանման գիտական խորհրդի երաշխավորության առկայությամբ)	90000
5	ՀՀ արտոնագրեր. մեկ միավորի համար	55000
6	Միջազգային արտոնագրեր. մեկ միավորի համար	150000
7	Միջազգային գիտահետազոտական դրամաշնորհի շահում	150000
8	Տեղական գիտահետազոտական դրամաշնորհի շահում	100000

* Միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Web of Science) ընդգրկված պարբերականներում տպագրված հոդվածների քառորդների տարբերության դեպքում որոշումը կայացվում է ի օգուտ հեղինակի:

3. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Հրապարակումների լրավճարը կտրամադրվի միայն վերջիններիս հրատարակվելուց հետո:

3.2. Աղյուսակում նշված գիտական արդյունքի տեսակների պարամետրերը ստուգվելու և հաստատվելու են համալսարանի Գիտական աշխատանքների համակարգման բաժնի կողմից:

3.3. Գիտական ամսագրերի քառորդները ստուգվելու են Web of Science շտեմարանի դեպքում Journal Citation Reports (JCR- https://jcr.clarivate.com/) հարթակով, իսկ Scopus շտեմարանի դեպքում՝ Scimago (https://www.scimagojr.com/) հարթակով:

3.4. Լրավճարները վճարվում են ՀԱԱՀ այն աշխատակիցներին, որոնք տպագրված աշխատանքում, որպես իրենց աշխատանքի վայր, նշել են ՀԱԱՀ-ն:

3.5. ՀԱԱՀ գիտական կենտրոնների, գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների կողմից իրականացվող գիտական թեմաների և ՀԱԱՀ-ի տարբեր հետազոտողների կողմից իրականացվող գիտական թեմաների շրջանակներում կատարված հրապարակումների համար լրավճար տրամադրվում է միայն աղյուսակի 2-րդ և 3-րդ կետերում նշված աշխատանքներին:

3.6. Եթե աշխատանքը կատարված է համահեղինակների կողմից, ապա սույն կարգով սահմանված լրավճարի գումարը բաժանվում է համահեղինակների միջև: Լրավճարի տրամադրման պահին եթե համահեղինակներից մեկը կամ համահեղինակները ազատված են աշխատանքից, ապա ամբողջ լրավճարը բաժանվում է մնացյալ համահեղինակների միջև կամ մեկ համահեղինակի մնալու դեպքում ամբողջ գումարը տրամադրվում է վերջինիս:

3.7. Աշխատակիցները հրապարակված աշխատանքների ցանկը էլեկտրոնային տարբերակով և հիմքերը (պատճեները) ներկայացնում են ՀԱԱՀ գիտական աշխատանքների համակարգման բաժին:

3.8. Համապատասխան բաժինը, հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ, կազմում է և ՀԱԱՀ ռեկտորի հաստատման է ներկայացնում ՀԱԱՀ աշխատակիցներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

3.9. Սահմանված աշխատանքների կատարման համար տվյալ օրացույցային տարում ՀԱԱՀ աշխատակցի համար հաշվարկվող լրավճարի առավելագույն չափը չի կարող գերազանցել 800000 ՀՀ դրամը (ներառյալ հարկերը):

3.10. Կարգն ուժի մեջ մտնելուց հետո տպագրված աշխատանքները ներկայացվում են հետևյալ կարգով. 2022 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2023 թվականի հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածում տպագրված աշխատանքները կարող են ներկայացվել մինչև 2023 թվականի հունիսի 20-ը, իսկ 2023 թվականի հունիսի 15-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում տպագրված աշխատանքները կարող են ներկայացվել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների ներկայացման սույն կարգը գործում է յուրաքանչյուր հաջորդ տարվա համար՝ համապատասխանաբար: